

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ

Բանասիրական գիտությունների թեկնածու

**ԴՌԿՏՈՐ ՅՈՆԱՆՆԵՍ ԼԵՓՄԻՈՒՄԻ ՀԱՅԱՆՎԵՐ
ՀՐԱԴԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Արևմտահայության ծրագրված տեղահանման և արքորի վերաբերյալ առաջին անգամ, որ ստացան դր. Յոհ. Լեփսիուսը և հայ ժողովրդի մյուս գերմանացի բարեկամները, 1915 թ. մայիսի 31-ին էր, Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմի կողմից Ա.Գ.Ն.-ին ուղղված հետևյալ հետագիրը (որի պատճենը Ա.Գ.Ն.-ն ուղարկել էր նաև Լեփսիուսին)։ «Հայկական լրտեսության դեմն առնելու և նոր հայկական զանգվածային ապստամբությունների կանխման նպատակով Էնվեր փաշան նպատակադրվել է պատերազմական դրությունն օգտագործելով հայկական դպրոցների մի զգալի մասը փակել, հայերի փոստային հաղորդակցությունն ընդհատել, հայկական թերթերը փակել և այժմ ապստամբած հայկական կենտրոններից բոլոր՝ ոչ միանգամայն անբասիր ընտանիքներին վերաբնակեցնել Միջագետքում: Նա թախանձազին խնդրում է, որ մենք այդ հարցում նրան չխանգարենք: Թուրքերի այդ միջոցառումներն, իհարկե, մեզ թշնամի ողջ աշխարհում դարձյալ մեծ հուզումների տեղիք կտան և նաև կշահարկվեն մեր դեմ: Դրանք անշուշտ մեծ խստություն են նաև հայ բնակչության համար: Սակայն ես այն կարծիքին եմ, որ մենք իրավունք ունենք դրանք իրենց ձևի մեջ մեղմել, սակայն ոչ հիմնովին արգելել: Ռուսաստանից սնվող հայկական սադրանքները մեծ չափերի են հասել՝ սպառնալով Թուրքիայի գոյությանը: Խնդրում եմ դր. Լեփսիուսին և գերմանա-հայկական կոմիտեներին համապատասխանաբար հայտնեք, որ Թուրքիայի քաղաքական և ռազմական իրավիճակում ցավոք նշված միջոցառումներից խուսափել հնարավոր չէ...»¹:

Հեռագրին ծանոթանալուց հետո Լեփսիուսի նախաձեռնությամբ նրա՝ «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության և Գերմանա-հայկական ընկերության կողմից անմիջապես մի գրություն ուղարկվեց դեսպանին, որտեղ նրան կոչ էր արվում «զսպել հայերի դեմ ձեռնարկվող գործողությունները»: Ինչ վերաբերում էր հետագա քայլերին, ապա դրանք հնարավոր էր որոշակիացնել միայն իրադարձություններին ստույգ իրազեկ դառնալուց հետո, ուստի պատահական չէ, որ Լեփսիուսն իր հաջորդ պարտականությունը համարեց մեկնել Թուրքիա՝ անձամբ իրազեկվելու այնտեղ տեղի ունեցող իրադարձություններին: Նրա ցանկությունն Ա.Գ.Ն.-ում գտավ անհրաժեշտ աջակցություն, և պետքարտուղարի տեղակալ Ցիմերմանը դեսպանին հրահանգեց Թուրքիայի Ն.Գ. նախարար Թալեաթից թույլտվություն ստանալ Լեփսիուսի ճանապարհորդության համար²: Դա, այնու-

¹ Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919, էջ 79:

² Lepsius J., Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, „Der Orient“, 1919, էջ 22:

հանդերձ, այնքան էլ հեշտ չէր, քանի որ, ինչպես տեղեկացվում էր Վանգենհայմի հետազոտում, այդ առթիվ «Թալեաթին կատարված հարցումը» մերժում էր ստացել: Դեսպանն անկասկած մույնպես շահագրգռված չէր Լեփսիուսի այցով՝ երկյուղ կրելով, որ այն կարող էր Բ. Դոանը վրդովել և ամախորժություններ պատճառել դեսպանությանը³:

Լեփսիուսը, սակայն, համառորեն շարունակում էր պնդել Թուրքիա մեկնելու ամհրաժեշտությունը: Վկայակոչելով ՀՅԴ Սոֆիայի կենտրոնական գրասենյակից իր ստացած վերջին լուրերը՝ նա այն համոզումն էր արտահայտում, որ հետագրի տեղեկություններով ամհհար էր իրականության մասին կատարել ստույգ կոահումներ: «Դեսպանին կարծես պարզ չէ էնվեր փաշայի որոշման նշանակությունը, - նշում էր նա Ա.Գ.Ն-ում: - Ջանգվածային ապստամբություններ կամխելու համար աքսորում են ոչ թե ընտանիքների, որոնք «միանգամայն անքասիր» չեն, այլ զանգվածների: Իսկ զանգվածների աքսորումը նշանակում է զանգվածային կոտորածներ: Այդ գիտի ամեն ոք, ով ծանոթ է Թուրքիայի պայմաններին, որոնց ներքո տեղի են ունենում նման աքսորումները...»⁴:

Ցիմերմանի միջնորդությամբ դեսպանին ուղղված երկրորդ հարցապնդումն ի վերջո պսակվեց հաջողությամբ, և հունիսի վերջին Լեփսիուսը ստացավ մեկնման թույլտվությունը: Չնայած Թուրքիայի Ն.Գ. Ախարար Թալեաթի կողմից նրան արգելվում էր այցի ընթացքում Կ. Պոլսից դուրս գալ, այնուամենայնիվ իրադրությանն իրագեկ դառնալու համար այդ էլ բավական էր:

Նա սկզբում այցելեց Բազել և Ժնև՝ հայերի շվեյցարացի բարեկամներին տեղեկացնելով իր մտադրության մասին, այնուհետև Բուխարեստով մեկնեց Սոֆիա, որտեղ ՀՅԴ ղեկավարները նրան տեղեկություններ տրամադրեցին Թուրքիայում կատարվող իրադարձությունների վերաբերյալ: Այդ ամենին ծանոթանալուց հետո Լեփսիուսի համար արդեն պարզ դարձավ, որ սկսվել էր հայ ժողովրդի ծրագրված բնաջնջումը, և որ այլևս ամհհար էր շաբաթներ ի վեր կատարվածը ետ շրջել: Նա միայն հույս էր փայփայում, որ իրեն տրված տեղեկությունները կարող էին չափազանցված լինել, և որ գոնե արևմտյան ու կենտրոնական վիլայեթների հայությանը հնարավոր կլիներ աքսորից ետ պահել:

Լեփսիուսը հուլիսի 24-ին հասավ Կ. Պոլիս և այնտեղ մնալով երեք շաբաթ՝ փորձեց մանրամասն տեղեկություններ հայթայթել աքսորի ընթացքի և հետևանքների վերաբերյալ: Չնայած գերմանական դեսպանությունում նրան հյուպատոսական տեղեկագրերին ծանոթանալու հնարավորություն չտրվեց, այնուամենայնիվ դեսպանության աշխատակիցների բանավոր տեղեկությունների, գավառներից եկած օտարերկրացիների, երկրի ներսում գործող օտարերկրյա կազմակերպությունների և քարոզիչների տրամադրած նյութերի շնորհիվ նա կարողացավ հստակ պատկերացում կազմել իրադարձությունների վերաբերյալ: Այդ առումով մեծ նշանակություն ունեցան նաև նրա հանդիպումները հայոց Ջավեն Պատրիարքի և այլ տեղացի հայերի հետ, որոնք, հակառակ իրենց սպառնացող վտանգին, չվարանեցին կապ հաստատել Լեփսիուսի հետ⁵: Մեծ ծառայություն մատուցեց նաև Հ. Մորգենթաում, որը, շրջանցելով իր իրավունքները, Լեփսիուսին հնարավորություն

³ Trumpener U., Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, էջ 211:

⁴ Lepsius J., Der Todesgang des Armenischen Volkes, Potsdam 1919, էջ V:

⁵ Լեփսիուսը մշտապես գտնվում էր ռստիկանների հսկողության տակ: Անդ, էջ 24:

տվեց աչքի անցկացնել ամերիկյան հյուպատոսներից ստացված տեղեկագրերը. այն, ինչ գերմանական դեսպանությունը հրաժարվել էր անել:

Լեփսիուսը փորձեց հանդիպում ունենալ նաև ռազմական նախարար Էնվերի հետ, ինչը նրան հաջողվեց օգոստոսի 10-ին: Էնվերի վրա մարդկայնորեն ներգործելու ամհմարի-նությունը գիտակցելով հանդերձ՝ նա այնուամենայնիվ նախարարի հետ մեկժամյա զրույցի ընթացքում գործադրեց իր բոլոր ջանքերը՝ բնաջնջվող ժողովրդին փրկելու համար: Ի պատասխան Թուրքիայի բարոյական վարկի կործանման վերաբերյալ Լեփսիուսի նախա-զգուշացմանը՝ նախարարը երկարաշունչ ճառերով փորձում էր հիմնավորել «պատերազ-մական իրավիճակի թելադրանքով հեղափոխական տարրերի դեմ» միջոցառումների ձեռ-նարկման անհրաժեշտությունը:

Այն հարցին, թե արդյոք ապացույցներ կա՞ն կ. Պոլսի ձերբակալված հայ մտավորա-կանների հակապետական գործունեության վերաբերյալ, հետևեց խուսափողական մի պատասխան. «Դրա կարիքը մենք չունենք: Մենք ինքներս հեղափոխությանը ենք եկել այստեղ և գիտենք, թե նման բաներն ինչպես են արվում»: Նմանապես անարդյունք էր նաև տմտեսության ապագայի վերաբերյալ արտահայտված մտահոգությունը: «Ողջ Ան-տոլիայում մեծ և փոքր առևտուրը գրեթե բացառապես հայերի ձեռքում է, ընդգծում էր Լեփսիուսը: -Նրանք արևելյան մարզերում լավագույն հողագործներն են և ողջ Անատո-լիայում արհեստավորների դասը բաղկացած է գրեթե միայն նրանցից: Հայերը պետութ-յան ստամոքսն են: Դուք այն այժմ համում եք և կարծում, թե մյուս անդամները՝ թուրքմեն-ները, քրդերը, լազերը և չերքեզները, կստանձնեն նրա գործառույթները: Դա մոլորություն է»:

Էնվերն այդ անշուշտ չէր կարող չընդունել, սակայն այդ նրան չէր անհանգստացնում. «Կարող է՝ այդպես է, - պատասխանեց նա: - Մենք պատերազմից հետո թույլ ստամոքս կունենանք: Մենք կկազդուրվենք»:

Ի վերջո նորից անդրադառնալով աքսորյալ կանանց և երեխաների դրությանը՝ Լեփ-սիուսը խնդրեց իրեն թույլ տալ մարդասիրական օգնություն կազմակերպելու նպատակով մեկնել զավառները: Էնվերն իհարկե նրա խնդրանքը մերժեց՝ իր հերթին կատարելով մի այլ առաջարկ. դրամը հանձնել իրեն և իրեն էլ վստահել այդ գործի կազմակերպումը. «Եթե ես թույլ տամ, որ օտարները հայերին օգնություն ցուցաբերեն, - նշում էր նա, - ապա նրանք չեն դադարի հույսը դնել օտարների միջամտության վրա, - ... Հայերը պետք է ի-րենց բարեգործներին տեսնեն միայն մեր մեջ»⁶:

Լեփսիուսն անշուշտ դրան համաձայնել չէր կարող՝ համոզված լինելով, որ դրամն այդ դեպքում հոսելու էր թուրք պաշտոնյաների գրպանը: Իր առաքելությունը տեսնելով ձա-խողված՝ նա փորձեց փրկել մահվան դատապարտվածներից գոնե մեկին՝ Գերմանա-հայ-կական ընկերության հիմնադիր անդամ, բժշկագիտության և փիլիսոփայության դոկտոր Հայրանյամին, որը պատերազմից փոքր-ինչ առաջ Բեռլինից մեկնել էր Հայաստան և աք-սորի օրերին ձերբակալվել: Էնվերը խոստացավ Հայրանյամի «գործին» ծանոթանալ և նրա դեմ ծանրակշիռ փաստարկների բացակայության դեպքում կատարել Լեփսիուսի

⁶ Lepsius J., Mein Besuch in Konstantinopel..., էջ 26:

խնդրանքը, այն է՝ Հայրամյանին ազատել և ուղարկել Գերմանիա: Վերջինս, սակայն, ինչպես շուտով պարզվեց, արդեն բանտում սպանվել էր:

Ինչևէ, Էնվերի հետ հանդիպումից հետո Լեփսիոսն այլևս Կ. Պոլսում անելիքներ չունեցի և վերադարձավ՝ ճանապարհին Սոֆիայում դարձյալ հանդիպելով ՀՅԴ ներկայացուցիչներին, որոնք նրան տրամադրեցին նոր տեղեկություններ վերջին իրադարձությունների մասին: Սեպտեմբերի 18-ին հասնելով Բեռլին՝ նա համոզվեց, որ ԱԳՆ-ն արդեն բավականաչափ տեղյակ էր հայ ժողովրդի բնաջնջման՝ Թուրքիայում իրականացվող քաղաքականությանը, սակայն դիվանագիտական հորդորներից զատ այլ, ավելի կոշտ միջամտություն կատարելու մտադրություն չունեց: Աքսորը կասեցնելու համար Թուրքիայի վրա ուժգին ճնշում գործադրելու Լեփսիոսի պահանջը նույնպես դրական արձագանք չգտավ: «Ի՞նչ պետք է մենք անենք, - ի պատասխան նշում էր Ցիմերմանը: - Թուրքիայի հետ մեր միությունը պահպանվում է Թալեթի, Էնվերի և Խալիլի վեց ձեռքերի մեջ: Եթե այդ երեքը խելքի չեն գալիս, մեզ մնում է միայն հրաժարվել դաշինքից: Իսկ այդ մենք չենք կարող անել»⁷:

Լեփսիոսին այլ բան չէր մնում անել, քան Գերմանիայում, որտեղ «մամուլն արտատպում էր միայն թուրքական ստահող տեղեկությունները», ստեղծել ճիշտ հասարակական կարծիք և փորձել նրա օգնությամբ ճնշում գործադրել քաղաքագետների վրա: Նա սեպտեմբերի կեսին մեկնեց Բազել ու Ժնև և շվեյցարացի բարեկամներին տեղեկացնելով իր հետազոտությունների արդյունքների մասին՝ նրանց տրամադրեց նաև իր մոտ գտնվող փաստաթղթերի մի մասը⁸: Բացի այդ, «Basler Nachrichten» օրաթերթում նա հրատարակեց նաև մի անստորագիր հոդված, որտեղ ամփոփ կերպով ներկայացնելով իր դիտարկումների արդյունքները, միաժամանակ տեղեկացնում էր, որ գերմանական կառավարությունն այդ ամենին քաջատեղյակ էր, մերժում էր ռեպրոդուկցիան, սակայն անգոր էր դրանք արգելելու:

Ինչպես տեղեկացվում էր այդ առթիվ Բազելի գերմանական հյուպատոսի՝ Բեռլին ուղարկած հաղորդագրության մեջ, Լեփսիոսի հոդվածն այնտեղ «ափսոսելի սեմսացիա» էր առաջացրել: Ավելին, քանի որ շվեյցարական թերթերը ստացվում էին նաև Գերմանիայում, հոդվածն այնտեղ նույնպես ընթերցողներ գտավ, և երբ գերմանական զանգվածային մամուլի հրատարակիչների կողմից կառավարությանը նշված հրապարակման վերաբերյալ դիրքորոշում ցուցաբերելու պահանջներ ուղղվեցին, վերջինիս համար ստեղծվեց բավականին աննպաստ կացություն:

Բեռլինն այդ իրավիճակում հարկադրված էր ընդառաջել առաջատար մամուլի ղեկավարների հետ հանդիպում ունենալու Լեփսիոսի ցանկությանը, և հոկտեմբերի 5-ին նա ռայխստագի շենքում զանգվածային մամուլի ներկայացուցիչների առջև հանդես եկավ մի ընդարձակ զեկույցով⁹: Ներկայացնելով արևմտահայության դրությունը՝ հետտորն իր ելույթում մեկ անգամ ևս սուր քննադատության ենթարկեց գերմանական կառավարության անվճարականությունը՝ նշելով, որ հայ բնակչության բնաջնջմամբ վերանում էր նաև Գերմանիայի տնտեսաքաղաքական և մշակութային ազդեցությունը Թուրքիայի վրա, և այդ-

⁷ Lepsius J., Der Todesgang ..., էջ XXII:

⁸ Lepsius J., Mein Besuch in Konstantinopel..., էջ 31:

⁹ Անդ, էջ XXIV: Հմմտ. Feigel U., Das evangelische ..., էջ 214:

պիտով Գերմանիան իր իսկ մեղքով դառնում էր ոչ թե Թուրքիայի «պարոնը», ինչին մա իրականում արժանի էր, այլ «ծառան»:

Հետևաբար, ըստ Լեփսիուսի, Գերմանիան իր իսկ շահերից ելնելով՝ պետք է վճռակամորեն հանդես գար ի պաշտպանություն հայ ժողովրդի: Լեփսիուսը կոչ արեց մասնաձևաբան մնալ Թուրքիայի իրադրության վերաբերյալ «կեղծ և գունազարդված տեղեկատվություն» հրապարակելուց, ինչը նրա համոզմամբ էսպես կվճարեք Գերմանիայի վարկն աշխարհում: Չնայած երկրորդ կրքոտ բանավեճերի տեղիք տվեց և ընդհանուր առմամբ հակասական գնահատանքների արժանացավ, այնուամենայնիվ այն կառավարությանն այնքան էր անհանգստացրել, որ հաջորդ օրը մույն շենքում կազմակերպվեց մի մեծ մամուլի համաժողով, որտեղ Ա.Գ.Ն.-ի հետևորդ Լեփսիուսի տեսակետները որակում էր որպես «չափազանցված», և միսիոներական ընկերություններին կոչ էր անում՝ Հայկական հարցի հովանավորչության գործիք չդառնալ: Լեփսիուսը, սակայն, որոշակիորեն իր նպատակին հասել էր, քանի որ նրա երկրորդ հետո մամուլը Թուրքիայի ներքին իրադրության վերաբերյալ իր գնահատականներում դրսևորում էր նկատելի զսպվածություն¹⁰:

Ինչևէ, Լեփսիուսը վճռել էր կառավարությանը երիտթուրքական հայաչինջ քաղաքականության դեմ ակտիվ քայլերի դրդելու և աքսորյալներին օգնություն ցուցաբերելու համար կազմակերպել մասնաձևաբանի ավետարանական Եկեղեցուն: Այդ նպատակով մա հոկտեմբերի 15-ին Արևելքում գործող բոլոր միսիոներական ընկերություններին հրավիրեց Բեռլին՝ նրանց իրազեկելով իր ճանապարհորդության արդյունքների և ձեռք բերած նյութերի վերաբերյալ: Արդյունքում հավաքի մասնակիցները 50 ստորագրությամբ մի ընդարձակ ուղերձ հղեցին կանցլեր Բ. Հոլվեգին, որտեղ ներկայացնելով Հայաստանում տիրող իրադրությունը և իրենց մտահոգությունն արտահայտելով հայ ժողովրդի դրության ու հայկական հարցի առնչությամբ՝ նրանք կոչ էին անում ոչ թե «երևութային», այլ «իսկական և ազդեցիկ միջոցառումներ» ձեռնարկել Միջազգային անապատներում գտնվող հարյուր հազարավոր կանանց և երեխաներին սովամահությունից կամ սպանդից փրկելու և դեռ չաքսորված հայերի տեղահանությունը կանխելու նպատակով:

Միաժամանակ կոչի հեղինակները խնդրում էին այլ երկրների քրիստոնյաներին ևս աղետյալներին օգնություն ցուցաբերելու հնարավորություն ընձեռել: «Մեր ժողովրդի դիմադրունակության ուժը խիղճն է, - նշվում էր ուղերձում, - որով մենք բոլորս դիմում ենք Աստծուն մեր զենքի հաղթանակի համար: Այդ համերաշխությունը և բերկրանքը սպասում է սասանվել, երբ հայտնի է դառնում, որ մեր այլահավատ դաշնակցի կողմից մեր հարյուր-հազարավոր հավատակիցներ անհիմն կերպով հետապնդվում են, և մեր կողմից հնարավորը չի արվում նրանց փրկության համար»¹¹:

Լեփսիուսի դրդմամբ հոկտեմբերի 29-ին Գերմանիայի կաթոլիկների համաժողովի կենտրոնական կոմիտեի՝ միսիոների համաձայնագրի կողմից մույնպես մի համամասն ուղերձ հղվեց Բ. Հոլվեգին: Վերջինիս՝ նոյեմբերի 12-ին հաջորդած պատասխանը, սակայն, իր ընդհանուր հավաստիացումներով առավել դիվանագիտական ժեստի տպավորություն էր թողնում. «Կայսերական կառավարությունն ինչպես մինչև այժմ, այդպես մասնաձևաբան

¹⁰ Տես այդ մասին իր՝ Լեփսիուսի վկայությունը: Lepsius J., Der Todesgang..., էջ XXIV:

¹¹ Deutschland und Armenien ..., էջ 187:

յում միջոտ իր առաջնագույն պարտականություններից մեկը կհամարի իր ազդեցությունը գործադրել, որ քրիստոնյա ժողովուրդներն իրենց հավատի պատճառով չհետապնդվեն: Գերմանացի քրիստոնյաները կարող են վստահ լինել, որ ես այդ սկզբունքով առաջնորդվելով՝ կանեմ ինձնից կախված ամեն բան՝ ձեր արտահայտած մտահոգություններն ու բաղձանքները նկատի առնելու համար: Կ. Պոլսի դեսպանությանը ես տեղեկացրել եմ ձեր դիմումի մասին»¹²:

Չնայած կանցելի պատասխանը նշված հարցերի շուրջ կառավարության դիրքորոշման որևէ փոփոխություն չէր արձանագրում, այնուամենայնիվ Լեփսիուսը տեղի տալու միտք չուներ. ընդհակառակը, նա իր պարտքն էր համարում ըստ հնարավորին մեծացնել հասարակական ճնշումը՝ այդ համարելով իշխանություններին ակտիվ քայլերի մղելու միակ գրավակամը: Իսկ դա հնարավոր էր միայն Հայաստանում կատարվող իրադարձությունները հասարակական լայն շրջաններին մատչելի դարձնելու ճանապարհով, որի միջոցով Լեփսիուսը հույս ուներ նաև հակազդել թուրքական լրատվությանը և, բացի այդ, ավետարանական համայնքներին մղել հայ աքսորյալներին օգնելու նպատակով կատարել մեծաքանակ հանգանակություններ:

Լեփսիուսը ջանում էր այդ խնդիրն իրագործել թե՛ ընդհատակյա ճանապարհներով և թե՛ բացահայտ լրատվության՝ առկա հնարավորությունների օգտագործման միջոցով: Նախ անդրադառնանք նրա բացահայտ տեղեկատվությանը, որ իրագործվում էր իր իսկ կողմից խմբագրվող՝ «Der Christliche Orient» ամսագրի միջոցով: Պարբերականի՝ 1915 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր համարում Լեփսիուսի և ԳԱԱ-ի տնօրենի ստորագրությամբ հրապարակվեց մի՝ օգնության կոչ, որտեղ բավականին թափանցիկ վկայություն էր կատարվում Հայաստանի իրադրության վերաբերյալ. «Մեր բարեկամներն այնտեղ մեծ միջոցների կարիք ունեն՝ տասնյակ հազարավոր աքսորվող կանանց և երեխաներին օգնելու համար, որոնք անցնում են Ուոհայով: Մեր առաջադրանքները, նույնիսկ եթե դրանք ամենածայրահեղ կարիքի մեղմացման են վերաբերվում, տասնապատիկ ավելի են, քան Համիդի մեծ կոտորածից հետո: Արդյոք հնարավոր կլինի՞ դեռ կենդանի հայերի կյանքը փրկել, գիտի միայն Աստված: Մեր պարտքն է, սակայն, անել, ինչ կարող ենք»¹³:

Այդ հրապարակումը, որտեղ բարեկամներին կոչ էր արվում «մեծագույն ջանքեր գործադրել» օգնության միջոցների հայթայթման համար, դարձավ առաջին ահագանգը «Der Christliche Orient»-ում: Լեփսիուսը, բնականաբար, հարկադրված էր պարբերականը հրատարակելիս ցուցաբերել մեծ զգոնություն գրաքննության կողմից նրա արգելումը բացառելու համար, քանի որ այդ դեպքում կվնասվեր նաև օգնության աշխատանքների պրոպագանդումը:

Ամենամեծ խոչընդոտը, սակայն, այն էր, որ Լեփսիուսի՝ Ուոհայի աշխատակիցներից ուղարկվող թղթակցությունները ճանապարհին գրաքննության կողմից ստուգման և «արբագրման» ենթարկվելով՝ տեղ էին հասնում հիմնովին կամ մեծ մասամբ անընթեռնելի (կտրատված կամ ջնջված) վիճակում: Դրա ցայտուն վկայություններից մեկն, օրինակ, Յ. Կյունցլերի՝ 1915 թ. դեկտեմբերի 4-ի հետևյալ մասնակն էր. «Հոսպիտալի համար այս անգամ ամառային արձակուրդներ չէլան: Այնուհետև եկավ նոյեմբեր չար ամիսը, որի մա-

¹² Deutschland und Armenien ..., էջ 198:

¹³ Lepsius J.; Roedenbeck, Hilferuf, „Der Christliche Orient“, 1915, էջ 73:

սին ես այստեղ հակիրճ ուզում եմ տեղեկացնել (Հետևող տեղեկությունը գրաքննության կողմից հասնել է: Երկրորդ էջը շարունակվում է նախադասության կեսից)... հիվանդներ: Ո՞վ պետք է բժիշկների բացակայության պարագայում աղքատներին հոգ տանի: Ո՞վ, եթե ոչ Ձեր եղբայր Յակոբը...»¹⁴:

Եվ, այնուհանդերձ, նույնիսկ այն նվազագույնը, որ հասնում էր տեղ, որոշակի պատկերացում էր տալիս մեծ ողբերգության մասին: Ջորջիանկ. «...վերջին առաքումից ես երկու օր 50 մարկի հաց եմ բաժանել անհայրենիքներին: Սովահարներն ինձ գրեթե կտոր-կտոր էին անում, այնպես որ ստիպված էի պաշտպանվել: Ցա՛վ կույրերի կույր ուղեկցողներին, որոնք հազարներին նետեցին դժբախտության մեջ...»: Եվ կամ «... Իմ կյանքի ամենածանր ամիսն է, որ իմ ետևում է գտնվում: Այստեղի ամերիկացի միսիոների համար չափազանց ծանր էր, և նրա նյարդերը դավաճանեցին ...»¹⁵:

Ուշագրավ է, որ գրաքննությունից հնարավորինս խուսափելու համար Ուոհայի աշխատակիցները փորձում էին իրողությունները ներկայացնել ակնարկներով, հաճախ կիրառելով նաև գաղտնալեզվի մեթոդը: Օրինակ, գրելով՝ «Հարյուրավոր քաղցածներ փախչում էին միսիայի հաստատությունը, ամենաաղքատների մեջ մեր բժշկական գործունեությունն ահռելի չափեր է ընդունում» նախադասությունը՝ հեղինակը նախապես հարկ էր համարում ընդգծել, որ Գերմանիայում ընթերցողները գիտեն, թե ովքեր են «քաղցածները» և «ամենաաղքատները»: Այդ և մյուս թղթակցությունների հրապարակման ժամանակ խմբագրությունն իր հերթին ընթերցողներին խորհուրդ էր տալիս ճշմարտությունը որոնել «տողերի արանքում»¹⁶:

Այնուամենայնիվ, պետք է ասել, որ թղթակիցների տեղեկությունների աղճատմամբ պայմանավորված լրատվական պակասը Լեիսիուսի կողմից պարբերաբար կատարվող պարզաբանումներով հասցվում էր նվազագույնի, չնայած, իհարկե, դրանք ևս հիմնականում պետք է փաստագրական բնույթ ունենային: Օրինակ, կյունցլերի՝ նոյեմբերի 19-ի հիշյալ թղթակցությունը հրապարակելիս նա կից գրությամբ տեղեկացնում էր, որ Ուոհայի հայկական թաղամասը ավերված, իսկ քրիստոնյա բնակչության մեծագույն մասը սպանված կամ աքսորված էր: «Մեր ընթերցողները,- նշում էր խմբագրականը մեկ այլ անգամ,- այս կցկտուր տեղեկություններից կարող են նկատել, որ հիմնական խնդիրը գրաքննության պատճառով միշտ հարկադրված շրջանցվում է: Չնայած մեր տեղեկություններն ավելի քան բավական են՝ իրադարձությունների վերաբերյալ ամբողջական պատկերացում ունենալու համար, սակայն քանի որ գրաքննությունը թույլ չի տալիս դրանք հրապարակել, մեր բարեկամները ստիպված են համբերել, մինչև մենք այդ մասին ավելին կկարողանանք ասել: Մեր ընթերցողները կարող են համոզված լինել, որ եթե մենք ևս ստիպված ենք լռել, ապա անգործ չենք, և որ իրենց նվիրատվությունները երբեք այնքան անհրաժեշտ չեն եղել, որքան այժմ»¹⁷:

¹⁴ Nachrichten, „Der Christliche Orient“, 1916, էջ 3: Այդ միջանկյալ պարզաբանումը կատարված է խմբագրության կողմից:

¹⁵ „Der Christliche Orient“, 1916, էջ 3:

¹⁶ Nachrichten, „Der Christliche Orient“, 1916, էջ 3:

¹⁷ Աճ, էջ 4:

Այնուամենայնիվ, եթե պարբերականը գրաքննության պատճառով չէր կարող տեղեկություններ հաղորդել քստրի բնույթի և եղանակների վերաբերյալ, ապա դրա ծավալը և հետևանքներն ընթերցողներին անհայտ չմնացին: Այդ առումով հատկապես մեծ դեր խաղաց Լեփսիուսի «Հեռացում դեպի Սիրիա» հոդվածը, որը տպագրվեց պարբերականի 1915 թ. վերջին համարում: Թուրքիայի հայաբնակ բոլոր վիլայեթներում «Հայ ժողովրդի բնորոշում» արդեն ոչ մի հայ չկար, տեղեկացնում էր Լեփսիուսը: Ովքեր այլևս ճանապարհին չէին, գտնվում էին Դեր էր Զորի և Մոսուլի միջև ընկած տափաստաններում. «Բացարձակապես ունեզուրկ մի քանի հարյուր հազար մարդկանց մի մուրացիկ ժողովուրդ, որի չորս հինգերորդը երեխաներ և կանայք են, ճամբարել է Միջագետքի անապատի եզրին, առանց իմանալու, թե ինչպես է ձմռանը գոյատևելու: Թուրքիայի հայ ժողովուրդը դարձել է պատերազմի զոհը»¹⁸:

Փաստագրական տեղեկատվությունը շարունակվեց նաև հետագայում: Եթե անգամ ընդունվեր, որ Թուրքիայի հայ բնակչության առավելագույնը մեկ երրորդը մահմեդականացման և փախուստի միջոցով կարողացել էր քստրից խուսափել, նշվում էր ԳԱԱ-ի վարչության՝ 1916 թ. սկզբին հրապարակված կոչում, ապա շուրջ 1 200 000 մարդ քստրվել էր: Նրանց մի մասը դեռ գտնվում էր ճանապարհներին, իսկ մոտ 600 000-ը, որոնք պետք է հասած լինեին Միջագետքի անապատները, դատապարտված էին այնտեղ քաղցից և հիվանդություններից մահանալու:

Ընդգծելով, որ արևելյան զավառների բնակիչներից «քստրավայր են հասել միայն կանայք և երեխաները», և այդպիսով նաև համապատասխան կոահումների հնարավորություն ընձեռելով՝ վարչությունը կոչ էր անում համախմբել ջանքերը՝ «աննկարագրելի զրկանքների» ենթարկված քստրայաներին օգնելու համար: Լեփսիուսն այնուամենայնիվ ձգտում էր ոչ միայն փաստերն արձանագրել, այլև պարզաբանել դրանց ներքին շարժառիթները. հանգամանք, որ, նրա համոզմամբ, ի վերջո հանգեցնում էր թուրք դաշնակցի վերաբերյալ առկա տեսակետների վերանայման անհրաժեշտությանը:

Եթե Թուրքիան, նշում էր նա, մինչև պատերազմն «ազգային» պետություն էր, ապա այժմ ձգտում էր «խլամի հիմքի վրա» վերակազմավորվել որպես մի միասնական մահմեդական պետության: Այդ բնականորեն հանգեցնում էր քրիստոնյաների մեկուսացմանը, որոնք այնտեղ եվրոպական մշակույթի կրողն էին: Առավել վտանգված քրիստոնյա տարրի՝ հայերի պարագայում նշված մեկուսացումը կատարվեց համատարած տեղահանման և քստրի ճանապարհով: Հետևաբար քստրի կազմակերպումն ուներ ոչ թե «ստրատեգիական» դրոշմապատճառներ, ինչպես ներկայացվում էր թուրքական լրատվության կողմից, այլ «ներքին քաղաքական»: Լեփսիուսի համոզմամբ, այդպիսով մեծ պատասխանատվություն էր ծանրանում Թուրքիայի դաշնակցի՝ քրիստոնյա Գերմանիայի վրա, որի պատվով պարտքն էր ամեն ջանք գործադրել՝ «քստրի ամենը զոհերին» փրկելու համար¹⁹:

Լեփսիուսը մեծ հետևողականությամբ էր հերքում քստրը «ստրատեգիական» շարժառիթներով պայմանավորող տեսակետները, քանի որ Թուրքիայի հակահայկական քարոզչությունը հենվում էր այդ կեղծիքի վրա: Նա անվուրջ էր համարում քստրի հարցում Օս-

¹⁸ St'u „Der Christliche Orient“, 1915, էջ 90-91:

¹⁹ Lepsius J., Die Wegführung nach Assyrien, „Der Christliche Orient“, 1916, էջ 91:

պին Գարաբիսարի և Վանի դիմադրության շահարկումները, քանի որ երկու դեպքում էլ հայերի պայքարը զուտ ինքնապաշտպանական նպատակներ ուներ, և բացի այդ՝ առաջինը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ արքայը արդեն սկսվել էր: Նմանապես անհիմն էին նաև հայերի դասալքության և դավաճանության վերաբերյալ տարածում գտած տեսակետները: «Լրտեսության կամ դասալքության առանձին դեպքերը,- նշում էր նա,- որոնք բնականաբար ի հայտ են գալիս պատերազմի բոլոր օջախներում, իսկ Թուրքիայում ինչպես հայերի, նմանապես նաև արաբների, քրդերի և թուրքերի մեջ ունեն մասնավոր և տեղական նշանակություն, որոնց պատճառով չի կարելի ողջ ազգին պատասխանատվություն վերագրել»: Բացի այդ, նշում էր Լեփսիուսը, փաստերը ցույց են տալիս, որ «հայերն ընդհանուր առմամբ արիաբար և հավատարմորեն են ծառայել թուրքական բանակում, ինչը 1915 թ. փետրվարին վկայել է նաև Էնվեր փաշան»²⁰:

Արքայի ստրատեգիական անհրաժեշտությունը վկայակոչող թուրքական տեսակետների հերքմանը զուգահեռ՝ Լեփսիուսը սուր քննադատության էր ենթարկում այն գերմանական լրատվամիջոցներին, որոնք դրանց կապկերով՝ նպաստում էին հասարակության ապակողմնորոշմանը: Օրինակ, Ծերիֆ փաշայի և Արա թուրք կուսակիցների կողմից կառավարության դեմ դեռևս պատերազմից առաջ կազմակերպված հեղաշրջման փորձն, ըստ մի շարք գերմանական օրաթերթերի, կապված էր մի «մեծ հայկական դավադրության» հետ: «Wiener neue freie Presse», «Neues Stuttgarter Tagesblatt», «Leipziger Tagesblatt» և մյուս օրաթերթերում ազատ շրջանառություն էր կատարում նաև Կ. Պոլսից 1915 թ. հունիսին ստացված այն ստահող տեղեկությունն, ըստ որի հայերը Վանի վիլայեթում «կոտորել էին» 150000 մահմեդականների: Գերմանական մամուլի հրապարակումներում այդ «փաստն» օգտագործվում էր նույնիսկ որպես հիմնավորում հայկական կոտորածների արդարացման համար. «Ովքեր հայկական կոտորածներից բողոքում են,- նշված էր, օրինակ, հրապարակումներից մեկում,- մոռանում են, որ դրանից առաջ, ինչպես ապացուցված է, 150000 մահմեդականներ դարձել են հայերի զոհը»:

Լեփսիուսը սուր քննադատությամբ էր անդրադառնում իրականությունը խեղաթյուրող այդ հրապարակումներին. «Մամուլում հաճույքով են ասում՝ «ինչպես ապացուցված է», երբ այդ մասին փաստեր չունեն,- հայտարարում էր նա: - Այդ 150000 կոտորվածների արձագանքը շարունակ հնչում է գերմանական մամուլում: Ով նման կոտորածներ է հորինում, դրանք վերագրում է դժբախտ հայերին, «ինչպես ապացուցվածից» է խոսում, երբ ոչինչ ապացուցված չէ, ստանձնում է նույն մեղքը, որը մենք վերագրում ենք Անտանտի մամուլին: Եթե որևէ մեկն ավելի լավ իրազեկված չէ, քան մեր մամուլը, ավելի լավ է լոխ»²¹:

Հատկանշական է, որ Գերմանիայում Արա հրապարակումներից ալեկոծված հասարակական կարծիքը հանդարտեցնելու նպատակով թուրքական կառավարությունը 1916 թ. հրատարակեց մի «Կարմիր գիրք», յսպաես կոչված՝ հայկական ապստամբությունների մասին, որն անշուշտ իր նպատակին կհասներ, եթե արժանի հակահարված չստանար: Եվ այն չուշացավ. Լեփսիուսն այդ աղթիվ հրատարակեց և առաքեց մի գաղտնի թոուցիկ, ո-

²⁰ Ա.Ող, էջ 90:

²¹ Ա.Ող, էջ 92-93:

րը կրում էր «ի պարզաբանումն հայերի կարծեցյալ ապստամբությունների» վերնագիրը, և որտեղ մերկացվում էին թուրքական հրապարակման կեղծիքներն ու նեմզ միտումները:

Կարճ ժամանակ անց, 1916 թ. նոյեմբերին, նա որպես գաղտնի թոուցիկ վերահրատարակեց և առաքեց նաև փոքր-ինչ ավելի վաղ՝ սեպտեմբեր ամսին «Der Christliche Orient»-ում հրատարակված իր «Թուրքիայում օգնության գործի մասին» հոդվածը, որը մանրամասն տեղեկություններ հաղորդելով կատարված ոճրագործությունների և քստորյալների ծանր դրության մասին՝ օրգանապես լրացնում էր մախորդին: Թուուցիկները մեծ տպաքանակով առաքվելով հասարակայնությանը՝ հնարավորություն ընձեռեցին կանխել այն թյուրիմացությունները, որ կարող էին առաջանալ թուրքական հրապարակման հետևանքով:

Հակահայկական քարոզչության դեմ Լեփսիուսի պայքարն ուղեկցվում էր նաև հայ ժողովրդի պատմական առաքելության, նրա մշակութային արժեքների և ազգային առանձնահատկությունների արժեքորմամբ ու վերագնահատմամբ՝ այդպիսով ստանալով նաև կրոնա-մշակութային և տնտեսա-քաղաքական հիմնավորում: Այդ առումով առանձնակի հիշատակության է արժանի Հ. Խրիստի «Հայերի տնտեսական և մշակութային նշանակությունը» հոդվածը, որը տպագրվեց «Der Christliche Orient» պարբերականի՝ 1916 թ. 7-9-րդ համարներում²²: Հեղինակը, որ երկար տարիներ գործել էր Ուոհայում և շփումներ ունեցել Արևելքի քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների հետ, սույն հոդվածով նպատակ էր հետապնդում փաստել հայության անփոխարինելի նշանակությունը Արևելքի տնտեսական և մշակութային զարգացման խնդրում, մի խնդիր, որ համարվում էր Գերմանիայի հետպատերազմյան արևելյան քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը: Մանրագնին հիմնավորելով, որ Արևելքի զարգացման առաքելությունը կարող էին իրագործել միայն հայերը՝ Խրիստն ահազանգ էր հնչեցնում մեծ ողբերգության առնչությամբ, որ ապրել էր արևմտահայությունը, և որը դեռ շարունակվում էր՝ սպառնալով բնաջնջել նաև անապատներում կուտակված՝ դեռ կենդանի հարյուր-հազարավորներին: Մի ողբերգություն, որի համար, ինչպես ցույց էր տալիս Հայկական հարցի պատմությունը, առաջին հերթին մեղավոր էր Եվրոպան... Քանի որ, ըստ հոդվածագրի, այն ոչ այլ ինչ էր, քան Հայկական հարցի ամուլ զարգացումների պատճառը: Այնուամենայնիվ, Խրիստի համոզմամբ, դեռ ուշ չէր սխալն ուղղելու և հայ ժողովրդի բնաջնջումը կասեցնելու համար, այլապես ոչ միայն Գերմանիայի տնտեսական ծրագրերը կձախողվեին, այլև Առաջավոր Ասիայի բոլոր երկրները «կդատապարտվեին կործանման»²³:

«Der Christliche Orient»-ը, սակայն, գրաքննության ճնշման պայմաններում հասարակության իրազեկման՝ նախանշված նպատակին ըստ հարկի ծառայել չէր կարող, ուստի պատահական չէ, որ Լեփսիուսը վճռեց դիմել նաև ստեղծված իրավիճակում ամենահամարձակ և ազդու միջոցին. այն է՝ իր հավաքած տեղեկություններն առանձին գրքով հրատարակել և առաքել Գերմանիայի հասարակական շրջանակներին: Առաքումը պետք է կատարվեր գաղտնի, քանի որ այլապես կձախողվեր: 1916 թ. գարնանը գիրքը՝ «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին» վերնագրով, 20500 օրինակով արդեն

²² Christ H., Die Bedeutung der Armenier, „Der Christliche Orient“, 1916, էջ 35-44:

²³ Անդ, էջ 44:

պատրաստ էր առաքման, և Լեփսիուսը տեղագրից փութկոտությամբ ձեռնամուխ եղավ այդ գործին:

Նա այնպես էր հաշվարկել, որ Գերմանիայի բոլոր ավետարանական քահանայությունները ստանալին աշխատությունը: Գրքի օրինակները փոստային փաթեթավորմամբ որպես փակ, գաղտնի առաքում ուղարկվում էին վստահված անձանց, որոնք իրենց հերթին դրանք տարածում էին համայնքներում: Միայն Ռայխստագի և Վյուրտեմբերգի 191 պատգամավորների համար կատարված առաքումը, թերևս, անհաջողությամբ պսակվեց, քանի որ ուղարկված օրինակները տեղ չհասնելով՝ բռնագրավվեցին: Բարեբախտաբար այդ դեպքը միակն էր, և նա ըստ էության հասցրեց իրականացնել իր հանդուգն ձեռնարկը²⁴:

Երբ գրքի առաքումն ավարտվել էր, Լեփսիուսը, տարբեր կողմերից նախագուշացումներ ստանալով և միաժամանակ իր շաքարախտը բուժելու նպատակով, հուլիսի 15-ին մեկնեց Հոլանդիա²⁵: Նա այդ քայլին դիմեց՝ նաև քաջ գիտակցելով, որ հայրենիքում այլևս չէր կարող հայ ժողովրդի համար ազատ գործել: «Իհարկե, - այդ առթիվ նշում էր Օեֆերը, - գրաքննությունն այնքան խիստ էր, որ Լեփսիուսին հարկադրաբար կրեցնեին և այդ կերպ կկարողանային նրան արգելել ժամանակին հանդես գալ ի պաշտպանություն հայ ժողովրդի: Այդ կամխելը և միաժամանակ հայրենիքին ծառայել կարողանալը անվիճելի հիմքեր էին նրա՝ Հոլանդիա մեկնելու համար»²⁶:

Ինչևէ, գիրքն արդեն առաքված, իսկ հեղինակը արտերկրում էր, երբ Թուրքիայի դեսպանն այդ մասին տեղեկանալով՝ սեպտեմբերի 9-ին հանդես եկավ ԱԳՆ-ին ուղղված բողոքով: Իր դժգոհությունը հայտնելով այն առթիվ, որ «Հայկական հարցին վերաբերվող ամենաստոր բորշյուրներից մեկը՝ «լի կեղծ զրպարտություններով», հնարավոր է եղել Գերմանիայում տարածել, նա պահանջեց դրա դեմ միջոցառումներ ձեռնարկել և կասեցնել Լեփսիուսի հայանպաստ «ագիտացիան»: Ցիմերմանն ի պատասխան նրան տեղեկացրեց, որ գիրքն օգոստոսի 7-ին բռնագրավվել էր: Նա հավանաբար նկատի ուներ պատգամավորներին ուղարկված օրինակների բռնագրավումը, որի մասին Լեփսիուսը տեղյակ չէր: Սակայն այն, որ նա և իր մերձավորները տեղյակ չէին նաև բռնագրավման որոշմանը, թույլ է տալիս ենթադրել, որ կառավարությունը դրանով հետևողականորեն զբաղվելու մտադրություն չի դրսևորել: Այսպես թե այնպես, գիրքը հրատարակող «Reichsbote»-ի հրատարակչությանը ևս գրքի բռնագրավման մասին երբևէ պաշտոնական տեղեկություն չուղարկվեց²⁷:

Լեփսիուսը Հոլանդիայում շարունակեց իր հայանպաստ գործունեությունը: Նա կարողացավ կապեր հաստատել այդ երկրի ազդեցիկ գործիչների հետ՝ ստանալով նաև նրանց աջակցությունը: Օտոտով այնտեղ հիմնվեց մի կազմակերպություն՝ Հայաստանի օգնությանն միջուկանակ կոմիտեն, որը հոլանդերեն հրատարակեց Լեփսիուսի տեղեկագիրը և շարունակաբար մեծաքանակ գույքեր էր հավաքում և ուղարկում Հայաստան՝ դեռ կենդանի մնացած հայ որբերին և կանանց օգնելու համար: Լեփսիուսը կարողացավ այն-

²⁴ Lepsius J., Was hat man den Armeniern getan?, „Mitteilungen...“, 1918, էջ 115:

²⁵ Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 104:

²⁶ Schäfer R., Geschichte..., էջ 92:

²⁷ Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen...“, 1918, էջ 136:

տեղից կապ հաստատել մեկ եվրոպայում գտնվող հայ գործիչների, մասնավորապես Պողոս Նուբար փաշայի և մյուս աշխատակիցների, ինչպես և անգլիացի հայանվեր գործիչ Ջ. Բրայսի հետ: Վերջինս, ի դեպ, արդեն հրատարակել էր իր «Կապույտ» գիրքը, որ վերաբերում էր հայ ժողովրդի տեղահանությանը, և երկու երախտավոր այրերը կարողացան մեկ և նույն փոխանակություն կատարել:

Լեփսիուսը Հոլանդիայում գործում էր մեկ կառավարության համար՝ ԱԳՆ-ի ցուցմամբ պարբերաբար հավաքելով և Բեռլին ուղարկելով պատերազմական իրադարձությունների վերաբերյալ անգլիական և հոլանդական մամուլի հրատարակումները և միաժամանակ Օեֆերի միջոցով կազմակերպում օգնության գործը մեկ Գերմանիայում: Ընդ որում, ԱԳՆ-ի համար կատարվող ծառայությունն էապես նպաստում էր այն բանին, որ մեկ կարողանար բավականաչափ ազատություն վայելել պատերազմի ընթացքում իր հայա-նպաստ գործունեությունը Գերմանիայում ևս շարունակելու համար²⁸:

Ինչևէ, եթե անգամ Լեփսիուսի ջանքերն անկարող էին փոխել մեծ տերությունների քաղաքականությունն, այնուամենայնիվ դրանք ունեցան խիստ կարևոր նշանակություն: Իրավամբ պետք է ասել, որ Լեփսիուսը կարողացավ ճեղքել թուրքական գործակալությունների և մյուս կապիտոլ գերմանական լրատվամիջոցների կազմակերպած լրատվական շրջափակումը Հայաստանում կատարվող իրադարձությունների վերաբերյալ: Նրա շուրջ համախմբվեցին բազում բարեկամներ, որոնց աջակցությամբ մեկ Ուոհայի՝ իր աշխատակիցների միջոցով ձեռնամուխ եղավ եղեռնից մազապուրծ, 1916 թ. վերջից Թուրքիայի մեծ քաղաքներում հանգրվանած հազարավոր որբերի և այրիների փրկությանը: Բավական է մշել, որ 1916 թ. հուլիսից մինչև դեկտեմբեր մյուս՝ «ամհատական օգնության գործով» հավաքվեց 46 835,65, 1917 թ.՝ 202542,30, իսկ 1918 թ.՝ 494448,49 մարկ, որի մեծագույն մասն առաքվեց Ուոհայ և մասամբ մեկ Ռակա՝ տրամադրվելով սովաբար հայերի կարիքներին: Բացի այդ, Լեփսիուսը կարողացավ 1918 թ. դեկտեմբերին մեկ 50000 մարկ արժողությամբ դեղորայք և բուժասրքավորումներ ուղարկել Հայաստանի Հանրապետություն, որտեղ կուտակվել էին բազմաթիվ որբեր²⁹:

Այդ ամենը Լեփսիուսի տեղեկատվության արդյունքն էր, որի շնորհիվ հասարակությունն իրագեղ դարձավ հայության դրությանը: Ինչպես վկայում էր Ռ. Օեֆերը, միլիտարիզմը հիմնականում այն շրջաններից էին, որտեղ առաքվել էր մյուս «Տեղեկագիրք»:³⁰ Մեծ դեր խաղացին, անշուշտ, մեկ հիշյալ մյուս հրատարակումները: Իսկ, որ ոչ պակաս ուշագրավ է, այդ ջանքերի միջոցով մախադրյալներ ստեղծվեցին մեկ հետպատերազմյան շրջանում լայնածավալ օգնության աշխատանքներ իրականացնելու համար, որոնք անընդմեջ շարունակվեցին մինչև երկրորդ աշխարհամարտի սկիզբը և իրենց հարկադիր ավարտին հասան միայն 1943 թ.:

²⁸ Lepsius J., Orient-Mission, „Der Orient“, 1924, էջ 33:

²⁹ Lepsius J., Not und Hilfe, „Der Orient“, 1919, էջ 134:

³⁰ Schäfer R., Geschichte..., էջ 99: